



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2024 թվականի N 41-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ  
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆՁՈՐԵՍԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ  
ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ  
ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հաշվի առնելով Գորիս համայնքի ղեկավարի առաջարկությունը,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Հավանություն տալ Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Խնձորեսկ գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,09հա արոտավայրը (կադաստրային ծածկագիր՝ 09-045-0132-0165) փոխադրել ջրային հողերի նպատակային նշանակության հողատեսքի՝ համայնքային կարիքների բավարարումն ապահովող ջրավազանի կառուցման նպատակով:
- Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ  
ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ  
ԳԱԼՍՅԱՆ ԱՆԻ  
ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ  
ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ  
ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ  
ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ  
ՏՈՌՈՂՅԱՆ ԱՐՏԱԿ  
ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2024թ. մարտի 15  
ք. Գորիս

